Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 677 - Ա
որոշման

«ՄԱՔՐՄԱՆ ԿԱՅԱՆԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ ԵՎ ՏԱՐԱԾՔԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ»
ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	«Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի Լեռնագոգ գյուղում կառուցված և կառուցվող առանձնատների և մանկապարտեզի (Հայաստանի Հանրապետության փոխվարչապետի 2022 թվականի հունիսի 27-ի N 463-Ա և 2025 թվականի ապրիլի 28-ի N 270-Ա որոշումներով) համար մաքրման կայանի կառուցում և դրանց տարածքի բարեկարգում:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3.	Բարեգործը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (Հայաստանի Հանրապետություն, քաղ. Երևան, Բաղրամյան պողոտա 26/1, ՀՎՀՀ՝ 02507456)
4.	Ծրագիրը կատարողը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (Հայաստանի Հանրապետություն, քաղ. Երևան, Բաղրամյան պողոտա 26/1, ՀՎՀՀ՝ 02507456)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի Լեռնագոգ գյուղ, բնագավառը՝ սոցիալական
6.	Ծրագրի բյուջեն	59,750,700 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Լեռնային Ղարաբաղից տեղահանված 5 և ավելի երեխա ունեցող, ինչպես նաև պատերազմի հետևանքով զոհված կամ հաշմանդամ զինծառայողների ընտանիքներ և Լեռնագոգ համայնք
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2025 թվականի հոկտեմբերի 15-ից մինչև 2026 թվականի փետրվարի 27-ը

9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Մաքրման կայանի կառուցում և տարածքի բարեկարգում՝ մաքրման կայանի, արտաքին ջրամատակարարման ցանցի կառուցում և ճանապարհային պատվածքի բարեկարգում: Նախատեսվում է իրականացնել 2025 թվականի հոկտեմբերի 15-ից մինչև 2026 թվականի փետրվարի 27-ն ընկած ժամանակահատվածում՝ 59,750,700 դրամի չափով:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Մաքրման կայանի կառուցման և տարածքի բարեկարգման աշխատանքներ՝ 59,750,700 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Համագործակցություն չի նախատեսվում:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

17.10.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ